—Վրաստանի Առաջնորդի անունով, որով պատուիրուեց շարունակել եկեղեցական–ծխական դպրոցներում գործածել այն ծրագիրն, որ մինչև օրս գործադրուում է, մինչև նորի կազմելը։ թ. 849 դեկտ. 31.

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԸ

—Դեկտեմբերի 4-ին Սինոդը քննութեան առաւ Նուխի գաւառի Սուլթան–Նուխի գիւղի բնակիչ Սիւքիաս Տէր Զաքարեանի խնդիրը։ Ինչպէս գործից երևում է, Սուլթան–Նուխի գիւղը ունի 200 տուն բնակիչ, երկու եկեղեցի և միայն մի քահանայ, որը ծերութեան, կուրութեան և հիւանդութեան պատճառով չի կարողանում հովուել ծխականներին։ Ընծայացու Տէր–Զաքարեանը սովորել է Գէորգեան ճեմարանում և անցել է չորրորդ դասարանի դասընթացքը։ Հրամայեցին. ի նկատի առնելով ընծայացու Տէր-Զաքարեանի պատրաստականութեան չափը, նրա չորսամեայ ուսուցչութիւնը և Թրքախօս ժողովրդի հոգևոր կարիքները՝ ամենախոնարհ յայտարարութեամբ խնդրել Նորին Սրբութեան բարեհաճ հաւանութիւնը Սիւքիաս Տէր-Զաքարեանին քահանայ ձեռնադրելու համար։ Թ. 763.

—Դեկտեմբերի 7-ին Սինոդը քննութեան առաւ ընծայացու Մխիթար Տէր-Բարսեղեանի խնդիրը։ Գործից երևում է, որ Վաղահաս և Կարմիր Բար գիւղերը ունեն 106 տուն բնակիչ, իսկ Տէր-Բարսեղեանը սովորել է միայն Արցախի թեմական ընծայարանում։ Հրամայեցին. ի նկատի առնելով, որ ընծայացու Մխիթար Տէր-Բարսեղեանը չունի պատշաճ ուսման վկայական, ծխակ. կանոն. 59 յօդ. հիման վրայ նորա խնդիրը թողնել առանց հետևանքի։ Թ. 768.

—Դեկտեմբերի 11-ին Սինոդը լսեց Նոր–Բայազէդ գաւառի Զըռչըռ գիւղացի ընծայացու Աղաբէկ Բաղդասարեանի գործը։ Զըռչըռ գիւղը ունի 110 տուն բնակիչ, ներկայումս քահանայ չը կայ գիւղում, իսկ ընծայացու Աղաբէկ Բաղ-

դասարեանը ներկայացրել է միայն թեմական դպրոցի երկրորդ դասարանի աւարտման վկայական։ Հրամայեցին. որովհետև ընծայացու Աղաբէկ Բաղդասարեանի ներկայացրած ուսման վկայականը չի համապատասխանում ծխակ. կանոն. 59 յօդ. պահանջներին, նրա խնդիրը թողնել առանց հետևանքի։ Թ. 772.

— Նոյն օրը Սինոդը լսեց Ղուբա քաղաքի բնակիչ երկրորդ կարգի վաճառական Յարութիւն Ստեփանեանի այրի Աթէլ Աղաբաբեան Ստեփանեանի կտակի գործը, որով նա իր երկյարկանի տան կէսը իր բակովը կտակում է Ղուբայի Հայոց եկեղեցուն։ Հրամայեցին. ուղարկելով ներկայացրած վաւերաթղթերը, խնդրել Կովկասի Տ. Փոխարքային, որ պատշաճ կարգադրութեամբ թոյլ տայ Ղուբայի Հայոց եկեղեցուն ընդունելու այրի Աթէլ Ստեփանեանից կալուածը որպէս նուէր։ Թ. 774.

— Նոյն օրը Սինոդը քննութեան առաւ գաղթական Խաչատուր քահանայ Տէր-Յարութիւնեանի մի շարք զեղծումների, օրինազանցութեան, ըմբոստութեան և մի շարք շահատակութիւնների գործը։ Հրամայեցին. Լսելով Նորին Վեհափառութեան կոնդակը, ճանաչել զեղծմնարար Խաչատուր քահանայ Տէր-Յարութիւնեանին զրկուած քահանայական կարգից և կոչումից։ Պատուիրել, որ նա այլ ևս չը կրի քահանայական զգեստը, իսկ հակառակ դէպքում դիմել ոստիկանութեանը։ Այս կարգադրութեան մասին յայտնել վիճակային առաջնորդներին, պատուիրելով որ նրանք խստիւ հետամուտ լինեն, որպէս զի յիշեալ Խաչատուր քահանան գաղտնի չը քահանայագործի զանազան թեմերում։ Նոյնպէս յայտնել նաև Ղարսի զինուորական նահանգապետին։ Թ. 776։

— Դեկտեմբերի 14-ին Սինոդը լսեց Տաթևի Հոգևոր կառավարութեան յայտարարութիւնը, որով նա յայտնում է, թէ հաշտարար միջնորդը 200 ռ. է պահանջում վանքապատկան Դաստակերտ, Աղիլու, Ղուշչի-Թաղաքենդ (Խասխասիկ) և Սիսեան (Ամիր-Գիւնէ) գիւղերի ուստաների

գրամօտայից պատճէններ տալու համար։ Հրամայեցին. թոյլ տալ Տաթևի Հոգևոր կառավարութեանը վճարելու 200 ռ. Զանգեզուր գաւառի I մասի հաշտարար միջնորդին Դաստակերտ, Ալիլու, Ղուշչի-Թաղաքենդ և Սիսեան գիւղերի ուստաների գրամօտաների պատճէնները ստանալու համար։ Թ. 782.

—Դեկտեմբերի 16-ին Սինոդը լսեց Նորին Սրբութեան Թ. 610 կոնդակը՝ Խորէն վարդապետ Մուրադբէգեանին Երևանի Փոխ-Թեմակալի պաշտօնում հաստատելու մասին։ Հրամայեցին. Նորին Սրբութեան կոնդակի համեմատ յայտնել Երևանի կոնսիստորիային, որ Խորէն վարդապետ Մուրադբէգեանը Փոխ-Թեմակալի պաշտօնի մէջ հաստատուել է և պատուիրել, որ յանձնուի Փոխ-Թեմակալին բոլոր առաջնորդական գործերը, հաշիւները և առաջնորդարանի գոյքը և տրուի նրան ռոճիկ շտատի համաձայն դեկտեմբերի 15-ից։ Թ. 789.

—Նոյն օրը Սինոդը լսեց Մատթէոս վարդապետի յայտարարութիւնը, որով նա՝ ցոյց տալով մեր հոգևոր ատեանների և գործակալների անփոյթ և անկանոն հաշուապահութիւնը, առաջարկում է ընդունել և տալ նրանց ղեկավարուելու իր մշակած հաշուետուութեան ձևերով։ Հրամայեցին. Հաւանելով Մատթէոս վարդապետի ներկայացրած հաշուետուութեան ձևերը և հոգևոր ատեանների ու նրանց ստորադրեալ հաստատութիւնների և պաշտօնեաների համար մշակած հրահանգը, տալ նրանց տպագրել և ուղարկել կոնսիստորիաներին ի գործադրութիւն։ Թ. 790.

—Դեկտեմբերի 21-ին Սինոդը լսեց Երևանի Նորք քաղաքամասի Ս. Սիմէոն եկեղեցու ծխատէր Յակոբը քահանայ Տէր-Սիմէոնեանի Պետրոս—Պօղոս եկեղեցու ծուխը ինքնագլուխ հովուելու գործը։ Հրամայեցին. Առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին Յակոբը քահանայ Տէր-Սիմէոնեանին ուղարկել Նորք քաղաքամասի Ս. Սի-

մէջն եկեղեցու ծուխը հոմուելու, որի համար էլ նա ձեռնադրուած է։ Թ. 794.

—Դեկտեմբերի 23-ին Սինոդը լսեց Աստրախան քաղաքի բնակիչ Աստուածատուր Մեղնիկեանի խնդիրը Ղարաուբաղար քաղաքի քահանայ ձեռնադրուելու մասին։ Հրամայեցին. Որովհետև ծխակ. կանոնադր. 59 յօդ. համաձայն նրանք, որոնք ցանկանում են քահանայ ձեռնադրուել քաղաքներում, պարտաւոր են թեմական դպրոցների աւարտական վկայական ունենալ, իսկ ընծայացու Աստուածատուր Մեղնիկեանը ունի միայն երրորդ դասարանի վկայական և Սինոդս չի կարող, հակառակ ծխական կանոնադրութեան յիշած յօդուածի, թոյլ տալ նրան ձեռնադրել, ուստի ամբողջ գործը ամենախոնարհ յայտարարութեամբ ներկայացնել Նորին Սրբութեան ի տնօրինութիւն։ Թ. 800.